

**Մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի շնորհավորական խոսքը  
Գրադարանավարի օրվա առիթով /07.10.2017/**

«Կյանքը գրքերով». այս խորագիրն են կրում գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումները Արագածոտնի մարզում:

ՀՀ-ում 2004թ. ապրիլին կառավարության որոշմամբ հոկտեմբերի 7-ը հայտարարվել է գրադարանավարի օր:

Հարգելիներս, արդեն 13-րդ տարին է, ինչ այդ օրը հանրապետության գրադարանների դռները մինչ ուշ երեկո բաց են լինում ընթերցասերների առաջ: Տոնի խորհուրդը գրքի արժևորումն է, նրա մեծ դերակատարությունը առողջ հասարակության ձևավորման գործում:

Գրադարանագիտությունը ամբողջական գիտություն է, որը ներառում է մանկավարժություն, մատենագիտություն, գրագիտություն, փաստաթղթագիտություն, սոցիոլոգիա, մշակութաբանություն, ինֆորմատիկա, թանգարանային և արխիվային գործ:

Գրատպությունը համարվում է գրքի ստեղծման կարևորագույն իրադարձություն: Յուրաքանչյուր գրքի արարումը լուրջ ստեղծագործական աշխատանք է՝ մտքի արգասիք: Գրքերը պահվում են գրադարաններում, գրադարանավարի վերահսկողությամբ: Գրադարանավարն է կապ ստեղծում գրքի և ընթերցողի միջև: Գրադարանավարն է ընթերցողին բերում ընթերցասրահ, առաջինն է կիսվում տպավորություններով, տալիս խորհուրդներ:

Նախկինում վարդապետներին էր վստահված գրադարանները: Մատենադարանը ստուգաբանորեն նշանակում է վարդապետների գրադարան: Հիմա Ձեզ է վստահված գրադարանները իրենց հարուստ բովանդակությամբ:

Այսօր մեր հանդիպումը տեղի ունեցավ Օշականում Ժորա Աբելյանի անվան 103 ամյա գրադարանում, որտեղ պահվում է 20.000 կտոր գիրք, 40 տարվա գրադարանավար Արևիկ Գևորգյանի ձեռքի տակ: Միջոցառումը սկսեցինք Արթուր Օշականցու նկարների ցուցահանդեսով, որոնք վաղը գիրք են դառնալու՝ ապագա սերունդներին հասանելի լինելու համար: Շնորհավորում ենք Ձեզ հարգելի Արթուր Օշականցի հերթական ցուցահանդեսի առիթով և շնորհակալություն Ձեր գեղեցիկ արարումների համար: Ձեռքերդ դալար:

Շնորհակալություն Ձեզ հարգելի Արևշատ Ավագյան այս միջոցառմանը ներկա գտնվելու համար: Ձեր շնորհավորանքի համար ուղղված մեր սիրելի գրադարանավարներին: Ձեզ նման մտավորականի հետ հանդիպումը օրը դարձնում է հիշարժան: Ձեզանից այնքան բան ունենք սովորելու մենք բոլորս:

Այսօրվա հնչեցրած յուրաքանչյուր հարցը կարևոր է գրադարանավարի աշխատանքի համար: Այս շփումը, գրադանավարի հիշարժան դեպքի, աշխատանքային գործունեության մասին պատմությունները, ինտելեկտուալ խաղը առիթ են ավելի ակտիվանալու, տեղեկանալու մեկը մյուսի մասին և առհասարակ մարզի գրադարանների մասին:

Պահենք կապը միմյանց հետ, ծավալենք նորանոր համագործակցություններ ու ունենանք լուրջ ձեռքբերումներ: